


ԲԱՏԱՆՈՐ ԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մշակարանի համար
Տարեկան 10 մր.
Վեցամսեայ 5 »
Լրատվականի համար
Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Անկերխոյի համար
Տարեկան 2.50 ռ.
Վեցամսեայ 1.25 »
ԿԱՆԻՒԿՎԱԾՐԱԿ

Կանոնադրանք սոցիալական
երեսին համար 40 սանթիմ
և խալ վերջին երեսին համար
20 սանթիմ և երեսին
սակի սակազաններու համար
20 Օ10 զեղք կրչայ :

ՈՒՍՏԱՆԻԿ

գրչայ R. P. Kalemkarian
Mecklenburgstrasse W. 4
Vienne (Austria)



Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՆԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ԸՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՒ 10 ԱՍԿՐԻՄ)

(ԳԻՒ 10 ԱՍԿՐԻՄ)

ԱՍՕԹ ՖՐԱՆՍԱՅԻՆ

Շարժումն մէջ կարգացիւք
թէ՛ Անմեղիկեան արատարած է
է Ֆրանսայէն Սուլթանին թելա-
գրութեամբ :

Հոր մը, որ շատերու համար
ոչ այնքան հետաքրքրական, սա-
կայն զգայուն սրտերու համար
մեծապէս կոծեցուցիչ :

Ո՞վ է Անմեղիկեան Հայ մը, որ
գերութեան և ստաւապանքի երկ-
րէն մաղապարտ ճողոպրած՝ խոս-
քով ու գրչով, ազատ հոգի վրայ,
իր տառապեալ աղջին յոնիրտի
կապտաւած իրաւունքներուն ջա-
տագով կը հանդիսանայ, և այն-
եւ լքի կարմիր Մարգարէ կարմիր
նախճիբներուն կենդանի ու ման-
րաման նկարագրութիւնը կընէ
սրտայայտ շեշտերով արեւմտաքի
քաղաքակիրթ ու լուսաւոր ազ-
գերուն առջեւ և կը ջանայ անոնց
խղճի ձայնն արթնցնել :

Գաղափարի մարդն իր գրչով
գաղափարի կոխը կը մղէ բանակի
մարդուն դէմ, թէեւ անհաս-
տար կռիւ :

Սուլթանը, գառազեղի մէջ
պարփակուած սախի շման, կը
կատարի, կը փրփրի, և՛ կորոշէ
անուղղակի միջոցներով սպաննել
տալ զինքը. սպարդիւն ջանք :

Վրէժխնդիր է սակայն կարմիր
Մարգարէ. իր սպաննիչ ու ոճրա-
գործ մտադրութիւնը վիժելէն
եաքը՝ անհրաժեշտ կը դատէ զիստ
մը հասցնել իր հանգիստը խոս-
վելու յանդգնող բայի մը :

Ճարպիկ է գործելու մէջ, յու-
սահատիլ չի գիտեր. Կիմուս
կընէ իր մաքափելիական մեքե-
նայութեանց և Պոլսոյ փրանսա-
կան դեսպանին միջոցաւ փրան-
սայէն արտաքսել կուտայ Անմեղ-
եանը :

Փրանսա, ինչո՞ւ այդքան ան-
կուս :

«Նըքայրութիւն, հաւատարու-
թիւն, ազատութիւն» հանրայե-
տութեանը նշանաբանը կը կազ-
մեն. լաւ է որ սերես, ջնջեա
զաննք :

Շատ ու շատ նախամեծար է
նաբոլէններու փրանսան, բան

կամպէթաներու և թիւռներու
ստեղծած փրանսան :


Նաբոլէնի ժամանակ՝ ազգեր
կազաազորու էին, մէլիքս փոխ-
օրով Հայաստան արեան նախ-
ճիրներու մէջ կը տապալուի :

Մեծ Մարգարայանին քմահա-
ճոյքներուն գոհացում՝ սալու հա-
մար՝ Անմեղիկեաններ կարտաք-
ուես, և երեք հարիւր հազար մեռ-
եալ հայերու սրտածմբիկ, ալե-
խարշ լաց ու կոծին սկանջախցիկ
կը դառնաս :

Մարգարութեան, նամանաւոր
մեղի հայոցս համար լուսաւորու-
թեան փարոս մըն էիր, իսկ այսօր
խաւարի տխուր պատկերը կը
նեկայացնեն, և արդարութեան
ու անհաստակ իրաւունքի պաշտ-
պանութեան համար երբեմնի ու-
նեցած համբաւիդ վրայ սեւ քոզ
մը կը թողուս :

Քու կողքը բրդած Հիւկիոն խոս-
քով՝ երբեմն սիրտն էիր եւրո-
պային, որուն բովանդակ մարմ-
նին մէջ կը ճեղքուէր իր կենսա-
բաշխ երակներդ, իսկ այսօր...!
Ամօ՞թ քեզի, Փրանսա :

ԱՒՕ



ՀԱՆԳԻՍ

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԼԷՍԹՃԵԱՆԻ

Կարճ բայց ցաւագին հիւան-
դութենէ մը յետոյ, անցեալ կի-
րակի առաւօտեան ժամը 11 1/2 ին
Եւսկիւտար ֆիւրքճիխանեանէնց
բնակարանին մէջ—ուր հիւրա-
սիրտած էր—կը վախճանի Հայ
եղիսկոպոսայ ընտրելագոյննե-
րէն Տ. Գրիգորիոս Սրբական Ալէ-
սթճեան :

Արդէն ամսէ մը ի վեր կա՛ծե-
ցուցիչ և յուսահատական լուրեր
կը հասնէին մեզ հայ եկեղեցւոյ
այս անվեհճեր մշակին հիւանդու-
թեան մասին : Կը բազմայինք և
կը մաղթէինք որ մեր ազգը չը
զրկուէր այնքա՛ն անձնուէր և
այնքա՛ն ուղիղ և պարկեշտ իր
մէկ զաւակէն, սակայն ինչ օգուտ

որ բոշկական ամէն ինամք ա-
նօպատ ըլլալով, մահը խլեց իր
զոհը :

Ե՞մ Տարեկան էր Ալէսթճեան.
բարձրահասակ, թուխ և խիտ
դէմքով անձ մը : Պոլսոյ պալատու
թաղին մէջ ծնած է և կարելի
եղած դաստիարակութիւնը ստա-
նալէ յետոյ 1867ին վարդապետ
և 1877ին ուղեղիկոպոս կը ձեռ-
նադրուի Տարօնոյ վիճակին
վրայ :

1863ին ի սյղբուն խմբագիր
եղած է «Թռչնիկ Պեղատեան»
հանդէսին, յետոյ դաստիարակ
և ապա եկեղեցական սրբմիջո-
ցին վարած է Բնիւրդի, Երզն-
կայի, Մուշի և Վանի առաջնոր-
դութիւնները :

Կ. Պոլսոյ մէջ վարած է նախ
Պալատի, Ենիքափուի, Սամա-
թիոյ Ս. Գէորգ և Իւսկիւտարի Ս.
Խաչ եկեղեցւոյ քարոզչութիւն-
ները, որ վերջապէս կը վախճա-
նի :

Ասոնցմէ զատ վարած է քա-
նիցս կրօն. ժողովոյ, ասեմակե-
տութեան պաշտօնը և վերջապէս
1896 թուին կաթողիկոս ընտ-
րուած էր Կիլիկիոյ թեմին՝ իր
եղբայրակից Իզմիրլեան Պատ-
րիարքի օրով զոր Սուլթանը չը
վաւերացուց և բեկանեց այն
վախով որ Կիլիկիոյ թեմը չըօ-
րանայ Ալէսթճեանի ընտրու-
թեամբը որ արդէն իր ժանա
աչքին փոշ մը եղած էր :

Ալէսթճեան, աղին, վեհանձն,
աւանդապահ և խոտակրօն եկե-
ղեցական էր :

Ոչ ոք կրնայ մոռնալ Ալէսթ-
ճեանի այն եռանդը, երբ պատ-
ռի շարդերուն ժամանակ Պոլսէն
հագուստ ու կապուստ խրկելու
գործին կօժանդակէր օրն ի բուն
Եւսկիւտարի մէջ ժողովելով,
պատրաստելով և կարել տալով :

Ալէսթճեան գաւառները ըն-
դարձակ պառոյտներ կատարած
էր, կը ճանչնար երկիրը, անոր
ժողովրդին պէտքերը ու գիտէր
անոր ցաւերն ալ որոնց դարմա-
նին համար միշտ կը մաքառէր
պաշտօնական մարմիններու հետ՝
այնքան որ զինքը կատարեալ
հայրէնասէր մը կը ճանչնային և

խորին յարգանք մը կար իրեն
նկատմամբ :

Ալէսթճեան եթէ ոչ յեղափո-
խական մեծ գործիչ մը, այլ
սատարոյ մը եղաւ. կը սիրէր և
կը քաջալերէր յեղափոխութիւնը
և սա հաւատքն ունէր որ առանց
մեռնելու աղաաութիւն չկայ :

Հակառակ իր ստացած միջակ
գաստիարակութեան շատ ուսում-
նասէր էր և ամէն տեղ ուր պաշ-
տօնի կը կոչուէր վարժարաննե-
րը նոր զարկ մը կատանային ու
թաղին կամ քաղքին կրթական
մակարդակը յանկարծական վո-
ւստիութեան մը կենդարկուէր :
Վարժարաններէ զատ վանքերու
ալ մեծ հոգ կը տանէր և Երզն-
կայ եղած ժամանակը նորոգած և
բարեկարգած նոյն կողմի տաս-
նեակ մը վանքերը : Իսկ վարա-
գայ վանքին համար մասնաւոր
հոգածութիւն մը ունէր. այնքան
որ մինչեւ վերջերս ամէն ամիս
2—300 դրոշ ժողովելով շարու-
նակ կը զրկէ եղեր, ինչպէս նաև
խրկած է արուեստագիտական
շատ մը գործիներ և առարկայ-
ներ :

Ինքը սակայն ազքստ մեռաւ.
կարօն վիճակի մէջ անցուց իր
բեղուն կեանքի վերջին օրերը :

Յուզարկաւորութիւնը շատ մեծ
հանդէսով կատարուած է յաջորդ-
օրը, երկուշաբթի Ս. Խաչ եկե-
ղեցւոյ մէջ, Պոլսոյ բոլոր եկե-
ղեցականաց դասուն ներկայու-
թեամբ :

Մարմինը ամփոփուած է Իւս-
կիւտարի գերեզմանատան իր
հարց դամբանին մէջ :

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԵՐԿՍԵՌԻ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՏԵՐԵԿԵԱՅ

Ք. ՏԱՐԵՇՐԱՆ

Կը վերաբացուի Սեպտեմբեր 1ին.
Ընդունելութեան պայմաններու եւ
ուրիշ տեղեկութեան համար գրիմը
նամակով կամ անձամբ առ

Հիւսիսային-Տնօրէն
Հայկական Կրթարանի
ԿՐՕՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
Վառնա, 18 Օգոստոս

—(—)

ՀԱՐԱՊԱՐԱԿԱԻ ՔՆՆԵՂ ԿԱՍ ԶԸ ՔՆՆԵՂ

Սակայն էլ հաւատամ, նոյն անշնորհ ածարարութիւնը չեն ժպտիր բնիկ հրապարակային քննութեան ատեն, համարում ըլլալով թէ՛ այդ օրը մէկէ աւելի ատակ և ատկի ծակէն դիտող քննիչներ պիտի գտնուին իրենց շուրջը, այս և մանաւանդ գոնէ յաջորդող ասորին իրենց հայէն չըլլալու երկիւղէն՝ պիտի ջանան կարելի եղածին չափ պաշտօնին ապահովող արդիւնք մը ցոյց տալ անպատճառ : Հակառակ պարագային, իրաւացի անասնելի զժախտութիւնը պիտի ունենայինք Ռուսոյի «ականաւոր երրորդութիւնը» մեր ասերուն վրայ կրելու ու պահելու, եթէ յանկարծ սեւ սատանան «անպատճառ» ձեւով զբազան չը բանար ու չը յայտնէր հոշակաւոր ցուցակները, որոնք վաղօրոք կարգադրուած էին հրապարակային քննութեանց համար : Մեզք, ս'ը ատարձան նախատինք ուսուցչական վեճակ ստպարէզին ու կոչումին դէմ :

Այո՛, որչափ որ հրապարակային խտտապահանջ (ուսուցչներին մասին) քննութիւնը չըլլայ, այնչափ ժամանակ Ֆիլիպէի «մի թէվէլի» ներսն : Պարկազի շիտացած շահատակին և Ռուսոյի մէջ որչափեալ խեղճ ու լեզը նորայրին պէս շարք մը պարտաբոյժներ պիտի շարունակեն իրենց աւել-

րիչ գերն ու անանական անտարբերութիւնը : Յաւալի՛ բան : Բարբառի անհիմն է նաև Պ. Պիտի այն վարկած, որով իբր թէ «փառասոր քննութիւններ կը սարքենք, պարզապէս ժողովուրդը շտապեալու, մեր փառասիրութիւնը յազնցնելու համար» : Իրանալու է, որ մենք քննութիւնը միջ փառասիրելու նպատակաւ չէ՛ զոր կամաւ կրենք, այլ ճշմարտապէս ժողովրդեան մեղքէ սպասած արդար համարատուութիւնը աւելի փոխով կը կատարենք : Իրաւ է, այդ աւելի երբեմն գովեստներ կը շտապուին, բայց չի կարծուիր որ ատենք ուսուցչներու փառասիրութիւնը յազնցնեն (ինչ փառասիրութիւն), այլ պարզապէս բարոյական քաջալերութիւն մը մատակարարելու կը ծառայեն, քաջալերութիւն՝ զոր պարտինք ընծայել արժանաւորաց :

Հիմա գտնք համառօտակի բացատրել թէ՛ քննութիւնը սպայոց օգտակար թէ՛ վնասակար է :

Անկարելի է ուրանալ թէ, երբ դպրոց մը «Ֆիլախայական» օրերէն մնացած պատուելի մը յանձնուած ըլլայ, բնական է, որ այդ մարդու կը հին աւելուան «ժամայիրքը կամ սպամոր» ծայրէ ի ծայր բերանացի սովորեցնելու գրութեան մարմալէն բռնուած, առանց հասկնալ ու հասկնելու, հում ու անհամ նիւթերով կը ծանրաբեռնէ անբաղգ աշակեր-

տին անգայտ ուղեղը : Ինչպէս միջանկեալ կերպով յիշենք այդ կարգի անխիղճ ճիւղներէն մի բաղադրանք իր ունիւթը, որ թատերախմբի մը մէջ ստանձնած «գովիքու թեան» դործէն հեռանալով իրեն պէս ջղաճիգ խելագարի մը միջոցաւ յաջողած էր Պուլիարիոյ Յ. քաղաքին կրթութեան մէջ սարգել ե. երեք տարիներ անպատկասօրէն, քու, փառասուրջ ու քծին դարձուածքներով կատարողիկ մը հանգիստնալէ վերջ՝ վաճառուած էր այդ տեղէն, առանց երեք բառ ուսուցանելու ուղայոց : Հաստատ սպիրիտէ կիմանանք թէ, այս օրերս նորէն հոն կը սլըքակայ եզեր յետօք սրտի կորսնցուցած պատուը ձեռք ձգելու : Բայց ո՛չ, արդէն իրեն անարդ յարգը (աւարր) առնուած է :

Ահա այդպիսի անհոգի արարածներու ճանկն ինկած սղեկներու միաբերն են, որոնք շուտով կը մթանան ու կը բթանան : Անշուշտ վերահաս քննութիւն մը ալ այս կարգի աշակերտաց համար՝ սոսկ դժօխական «տանջանք» մը և հետեւաբար ամբողջապէս վնասակար բան մըն է :

Ս. ԳՈՒԱՅՐ

(Մնացածը յարորով)

ՆՈՐ ԸՆԹԵՑԱՐԱՆ

Մանուկները կրթելու և գաստիարակելու գործին մէջ գասագրքի ներկայացուցած օգտակարութիւնն անժխտելի կը մնայ հակառակ այդ մասին յայտնուած քանի մը անընդհատ կարծիքներու, և Բուսոյ այն համոզումը թէ՛ «կարգացող ազան չը խորհիր, միայն կ'իթնուու» : չկրթուիր այն լատեր կը սորվի» ամէն պարագայի համար ճիշդ չէ : Լաւ մէթոտով պարաստուած ու խելացի կերպով դորձածուող գասագրք մը միշտ անհրաժեշտ ու զօրաւորագոյն գործիքն է մանուկն ու փոքր սղաքը կրթելու և գաստիարակելու համար : ան է որ ուսուցչին բերանացի փախուսիկ գասաւանդութիւնը հաստատուն կը պահէ, զայն վերջիւ կը միջոց կըլլայ և աշակերտին առանձին աշխատութեան և ինքնագարգացման առաջնորդ ու խթան կը հանդիսանայ :

Շատ պարագայներու մէջ լաւ գասագրքը ուսուցչի մը կարծէ և անոր օգտակարութիւնը միշտ անվիճելի կը մնայ քանի արուելիք դասը աւելի արդիւնաւոր կերպով բերանացի աւանդելու հնարաւորութիւնը չըլլայ :

Գրքի կրթական այդ կարեւոր գերը հասկնալով է որ ամէն երկրի կարող մանկավարժներ անոր պատրաստութիւնը իրենց մասնաւոր խնամոց ու մասնագիտական ատարկայ բրած՝ աշակերտները հեռզնակ աւելի գասագրքերով օժտելու կը ջանան :

Մեր կրթական մեծ պակասներէն մին է սղոց մանուկն ու իրական կրթութեան համար կանոնաւոր գասագրքեր չունենալն : Գարգայան մատենագրարներն աւելի մատուր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԻՊՈՒՏԻ

Ձեյախց միեկնէ Հարար. — Հարար քաղաքը և ևրա բնակիչները. — Հայ գաղարկանութիւնը և ևրա կենսիքը

Հարարը ծովազերից բաժնող մօտ 300 քիլօմետր տարածութիւնը համարեա անապատ է. ոչ մի սեղ երկրագործութեան նշոյլը չկայ, միայն անասնապահութիւնն է որ սեղ սեղ այդ ամառութեան մէջ կենդանութեան նշան է ցոյց տալիս : Գարգարա ու մացաններով ծածկուած բլուրները վրայ բուսած կանաչը հազիւ անուց է աւելի Սօմալիներին անասուններին՝ որոնց կաթով ու իւղով էլ կերակրվում է ինքը սէրը : Այդ երկրից անցնողը ակամայ մտաբերում է նոյն անիծած երկիրը՝ որ միայն փոշի և տաստակ է բուսնում : Ձեյան Հարարի հետ միացնող ճանապարհը այդ անապատով է անցնում. որը նեղ համարեա անհիպատի մի շաւղ է և որի ընթացքը միայն բնիկ ստաշնորդները կարող են որոշել : Այդ և պատճառը որ ամէն մի օտար ճանապարհորդ ստիպված է աւաջնորդներ վարձել : Ճանապարհ են ընկնում առաստարակ առաստները և երկուները, որովհետև կէսօրի տաքին անջուր տեղերում շատ դժուար է թէ մարդկանց և թէ կենդանիներին

ճանապարհ գնալ : Ինչեանները բացօթեա են. ուր ջրի հորեր կան, այնտեղ կանգ է առնում ճանապարհորդը, գիշերում է և միւս օրը ջրի պաշար առնելով շարունակում է ճանապարհը : Այդ սեռակ հորեր ստէն մի 30—40 քիլօմետր վրայ պատահում են, բայց երբեմն պատահում է որ տարածութիւնից հորերը ցամաքում են և այն ժամանակ ճանապարհորդը ստիպված է լինում մինչև երկու օրվայ համար ջրի պաշար վերցնել : Տեսարանը բոլորովին փոխվում է երբ կիլոմետր ամբողջ տեղի ևս հասնում, որ 60 քիլօմետր չափ հեռու է Հարարից : Այդ տեղից սկսում են բարձրանալ մի շարք լեռներ՝ որոնց վրայով անցնում է ճանապարհը. օդը աւելի գոլ է քան թէ տաք. բուսականութիւնը աւելի տառաւ կանախ փոքրիկ գետակներ՝ որոնք միջոց են ապիս երկիրը մշակելու : Որքան երկիրը տարբերվում է այնքան էլ բնակիչները զանազանվում են միմիայնից. այստեղ ծոյլ և աւազակարարոյ Սօմալիի փոխաբէն ապրում է աւելի աշխատասէր և խաղաղ «կալան» : տարբեր սովորութիւններով ու լեզուներով : Սօմալիներին թափառական կեանքի փոխաբէն այստեղ «կալան» իր հաստատ բնակութիւնն ունի. ամէն քայլում երեւում են փոքրիկ դիւղեր և մշակուած երկիր, որոնք անանկիւս ճանապարհորդը մի քիչ շունչ է առնում և անապատի ճնշող սպաւորութիւնից ազատվում :

Հարարը արևելքի հին քաղաքն-

րի նմանութիւնն ունի. շինված է բլուրի վրա և պարիսպով շրջապատված : Ստանի խոտն ընկած աները, նեղ ու ծուռ փողոցները արևելքի դրոշմ են կրում. իր գոյութիւնը հարիւրաւոր տարիներով են հաշվում. կատարված է եղել սեփական կիրքներով : Հետաքրքրական այն է որ բնիկ քաղաքացիները ոչ մի նմանութիւն չունեն իրանց շրջապատող ցեղերի հետ : Հարարցիները իրանց առանձին լեզուն ունեն. իրանց գոյնը աւելի պղնձաօրայն է քան թէ սեւ. նման եմէնի արարներին. հասանական է որ այդ կողմերից գողթած լինին հին ժամանակներում և Հարար քաղաքը հիմնած, որի բնակիչները այսօր 40,000 է հասնում. կրկնական կառավարութիւնը իսմայիլ փաշայի օրով արեւմ է Հարարը, բայց երբ Եգիպտոսը Անգլիացոց ձեռքն է անցնում, Եգիպտոսի կառավարութիւնը գատարկում է Հարարը, թողնելով երկրի կառավարութիւնը բնիկ էմիրի ձեռքում : Թուրք բաշխօղայն քննի թափթէփուքները մինչև այսօր էլ գեռ ապրում են : Հազիւ երկու տարի կարողանում է կատարել էմիրը, երբ Հապէշները՝ ներկայ թապաօրի ստաշնորդութեամբ՝ գալիս զբաւում են ու իրանց իշխանութեան սակ առնում :

Տաճկաստանի վերջին ղեկավարից յետոյ է որ հայ գաղթականների թիւը աւելացել է և մինչև 50 է հասել : Կան ամբողջ ընտանիքներ, կան նաև անհատներ, որոնք ա-

մէջքն էլ արհեստով կամ վաճառականութեամբ են պրազվում : Շատ տարօրինակ է անսեղ ընկերական կեանքի բացակայութիւնը այս մի բուրդ գաղթականութեան մէջ՝ որ սպորում է անազիւ տարածութեամբ հետո իր հայրենիքից՝ օտարներով շրջապատված և ուր միայն համերաշխութիւնը պիտի լինէր բնական ու միակ պայմանը : Մարդ գաղթանք է գրում երբ տեսնում է թէ ինչպէս անստաբար օտարների առաջ միմեանց դէմ զբաղարտութիւններ են թափում ու ընտանեկան պատիւ շօշափում : Մենք խորհուրդ կը աւելնք այն բնասնիքի պետիւն՝ որի վերջը գլխու օրապէս դառնում է այս ամէնը՝ մի քիչ աւելի պատուածանայ լինել ու հարաւորութեան վրայ շատ վատահոթ լին զինել : Այս սեղի հայերի ազգասիրութիւնն էլ տարօրինակ է. կան հարուստ ազգասէրներ՝ որոնք խոստացած են հայկական մի վաղ գործ ամբողջովին զինաւորել : Երբ Հայաստանը ինքնավարութիւն ստանայ, գրա համար էլ միշտ կը մերժեն երբ օգնութիւն խնդրես Հայաստանի սովեայնների համար : Կան նաև սղատաւիտ ձեւարանականներ՝ որոնք ուղեցել են բնիկ երկրաւորութիւնը տարածելու համար հայերին գրքեր բերել աւել, բայց չեն արել՝ որովհետև ազաները յեն ուղեցել մասնակցել :

Գ. Արաքիան

Հարար, 18 Յուլիս

կերպով աւանդուելիք ուսումներու (թուարանութեան եւ քերականութեան) վերաբերեալ գրքերով ճշտացնելու է։ Մայրենի լեզուն կամ բնութեան լեզուն որ ամէն ուսման եւ կրթութեան հիմք կը կազմէ, դեռ շատ սեղ հին քերականներու միջոցաւ եւ բարբաբոս մէթոսներով կուսանցուի։

Երբ եւրոպական քաղաքակրթութեան վաղուց բնութեամբ են թէ երկրաբանները ընթացանութեան վարձեցնելը ուսուցչին համար ուսմանը դժուար եւ աշակերտին համար ուսմանը ամբողջով յարմար չէր։ Երբ այդ պատճառաւ իսկ անոնց մանկավարժները ժ.թ. դարէն սկսած այլազան սեռութիւններ յղացած եւ բոս աշխարհէն հեռու կատարելագործած ու դիւրստոյց եղանակաւ քերական-ընթացարաններ հրատարակած են, մենք հայերս դեռ հազիւ ձեռնարկ անցնող այլաբանութեանը թողած ենք։

Եւ արդարեւ մեր դպրոցներուն մէջ գործածուած միակ մեթոդիկ քերական-ընթացարանը Պարոն Տէր Անդրեանցի մայրենի լեզուի Ա. սարին է, որու սակայն Պոլսոյ սոցիալիստիկ հեղինակին հետեւած մէթոդին համեմատ լաւ մշակուած չլլայուն եւ նիւթերու խճողում մը ներկայացնելուն համար ամէն կերպով չզոհացնելու դատարարակները։ Պէտքը կըզգացուէր լաւ քերական-ընթացարանի մը որ՝ տղոց կարգաւ սորվեցնելու համար ընդունուած լաւագոյն մէթոդին համեմատ պատրաստուած ըլլալով հանդերձ, իր քերական գրաքննութեան խզող սեղմում մեկնելն զերծ ըլլար եւ կարենար մանուսանց արտասահմանի հայոց մասալա սերունդին ազգասիրական ոգի մը ներշնչել։ Գիտէ՞ք որքան խոր են մանկական հասակի մէջ մեր կրած սոցիալիստիկութեանը եւ որքան սեւեռական անոնք մեր բնուարութեան փոքր կը կազմեն որքան ալ որ մենք ապագային զարգանանք ու կերպարանափոխուինք։ Այս սակեցողով անհրաժեշտ է որ փոքրիկ տղոց ընթացարանը մտքին, սրտին ու հոգւոյն վրայ միանգամայն ուղղող պատմական, բարոյագրական եւ իրադատական մանրիկ պատմութեանը պարտաւորուի։

Ուրախ ենք յայտարարելու թէ Պ. Պոնտուզեանի նոր յոյս ընծայած քերական-ընթացարանը այս բոլոր պահանջները ըստ կարելւոյն կը լրացնէ։ Մեր նախակրթարաններու մէջ անոր գործածութեան մեծապէս օգտակար ըլլալուն վստահ զայն չեմք։ Կը յանձնարարեմ յարգելի պաշտօնակիցներուս՝ որպէսզի հաճին անձամբ քննել այդ գաղափարը եւ անոր համեմատ հարկ եղած ընդունելութիւնը անոր չզլանան։

Որքան որ կենսափոսական ու հոգեբանական հիմքերու վրայ հաստատուած այլազան տեսութիւններ կան փոքրիկ տղոց կարգաւ սորվեցնելու լաւագոյն եղանակի մասին, մենք զանոնք երկու տեսակի կրնանք բաժնել. առաջինը կը կայանայ նախադասութիւնէն մեկնելով զայն բառերու, վանկերու եւ ստորոգիտարարութեան մէջ, երկրորդը առարկայի մը անունը եղող բառը կաննէ եւ զայն իր կազմիչ ձայններուն կը վերածէ։ Այս երկու տեսութիւններն ալ գործնականի վերածելու համար եւրոպական լեզուներու մէջ մէկըմէկէ աւելի հնարագիտութեամբ պատրաստուած քերականներ կան որոնք ընթացումն ու գիրը միաժամանակ կուսուցանեն։

Մեր մէջ որքան գիտեմ միայն երկրորդ տեսութեան համեմատ պատրաստուած մէկ գիրք կար որ Տէր Անդրեանցի մայրենի լեզուն է։ Ուրիշներ ալ ուղած են նմանցունել այդ գաղափարը բայց մէթոսը չը հասկնալուն պատճառաւ գործը լքած են։

Պարոն Պոնտուզեան սակայն իր անոր ընթացարանով յաջողած է Տէր Անդրեանցի մայրենի լեզուին Պոլսոյ սոցիալիստիկ կարգ մը թերութիւններէն խոստովելով հանդերձ, ձայններու եւ պարզ ընթացանութեան ուսումը առանց խճողումի, մէթոդիկ կերպով եւ աստիճանաբար յատուց տանելու։ Գիրքը երեք գլուխներու բաժնուած է որոնց առաջինին մէջ ազան ստորոգիտ ձայններն ու ձեւերը կը սորվի վանկերու եւ բառերու ընթացանութեան ու գրավորութեան հետ, երկրորդին մէջ իրադատական պարզ ժամօթութիւնները ներկայացնող փոքրիկ նախադասութիւններու ընթացանութիւնը կայ գլխաւոր տառերու ծանօթութեամբ, երրորդ գլուխը առաջնորդար զարգացող իրադատական, պատմական եւ բարոյագրական կտորներու ընթացանութեան շտակացում է, խօսակցութեան եւ քերականական էն պարզ ծանօթութեանց վարձութիւններով։ Մանկական երգեր եւ արտասանութեան նիւթեր տղոց առողջանութիւնը իսկ առանձին ու հանրապետական խորհրդակցութեանը զարգացնելու կը ծառայեն։ Վերջապէս ամէն տեսակէտով յանձնարարելի է Պ. Պոնտուզեանի պատրաստած այս գաղափարը, որովհետեւ ազատութեամբ անոր խելացի գործածութիւնը միշտ իր օգուտը պիտի ունենայ։

Կ. Պիոն

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Բուսնոյ, 15 Օգոստոս

Վերջապէս, սպասուած կերպով կին հասաւ. ժողովուրդը խուռն բաղմունքով անհրաժեշտ էր եկեղեցւոյ մէջ, իսկ զուրաճ թաղական խորհրդոյ եւ առաջնորդի հօր կարգադրութեամբ, բրիւթով մը՝ 20 շափ հետեւակ եւ ձիաւոր ստաիկաններով, (միայն թմբակներով զինուորներ իրենց թմբակներով կը պահէին) կազմ ու պատրաստ կապակներ թաղական խորհրդոյ հրամանները կէտ առ կէտ գործողութեամբ։ Արարողութեան միջոցին թաղական խորհրդոյ անդամաց եւ իրենց պնակալէզ արքանակներուն եւ անոնց գործունէութիւնը տեսնելու արժանի էր. ժողովրդեան պղտիկ շարժումն իսկ իրենց ուշադրութեանը չէին վրէպեցնէր. . . Ընդհակառակը, ժողովուրդը վերջին ծայր հանգարտ էր։ Բնու շէր կարելի կարծել թէ այդ ստաիկան հանգարտութեան տակ ստակալի պոթիկում մը սքողում կար։

Առաքելոյն, խառնարամը գատակարարին ներկայացուցիչները հրամայեցին ստաիկան զինուորներու ներս մտնել եւ ձայն բարձրացնող անմիջապէս ձեր-

բակալել։ Եւ ստաիկան-զինուորները հրամանները անմիջապէս կը կատարեն ու հակառակ Ս. Եկեղեցւոյ օրինաց, առանց ստորերը եւ զէնքերը գործը ձգելու, ներս կը խուռնել իրր թէ անսկի սքրագործութեան մը հեղինակները պիտի ձերբակալուին. . . . Երբ պատարայիչ քահանան կսկսի յիշել գաղաճան պատրիարքին անունը, հակառակ ստաիկանական հսկողութեան՝ ժողովուրդը, միահամուռ կերպով «չպիտի յիշուի կրկնումներով հեղեցւոյ կամարները կը թնթացնէ. ստաիկանները կսկսին թաղական խորհրդոյ անդամաց մասնախիչ բրած անձնաւորութիւնները ձերբակալել. ժողովուրդը ձերբակալուածներուն շարքը բարձրելով, արգելք կը հանդիսանար ստաիկաններուն ազապակելով թէ՛ սա ալգային խնդիր մըն է հետեւաբար այս կամ այն անձնաւորութիւնը յանցաւոր նկատելը մեծ անխառնութիւն է. կամ պէտք է ամէնքը իբր յանցաւոր ձերբակալել կամ աղաւ արձակել իրենց ընկերները։ Խուռնութեան պոտճառաւ եկեղեցւոյ արարողութիւնը խանդարուեցաւ. շոջ աղաներու կուսակցութեան պատկանող պարոն մը, որ նոյն պահու խիտ հրամաններ կարձակէր, անմիջապէս զլուռն զատաղանի ստակալի հարուած մը ստանալով կեցած տեղը կը պայտնէր։ Կրկնուր եւ ալջիկներու արձակած աղապակները կարծես աւելի սուր կերպարանք մը կուտային կուռնը։

Առաջնորդը, այդ խառնախիչ սեւեռայութեամբ, անվայել հայտութիւններ կը թափէր նոյն միջոցին թէ տեղացի ազատամիտ երիտասարդաց եւ թէ զաղթական հայտութեան գլխուն։

Քառորդ ժամ վերջ, ժողովուրդը ձերբակալուածներու հետեւելով՝ եկեղեցւոյն դուրս կելնէ եւ միեւնոյն պահանջքը աւելի բուռն կերպով կը ներկայացնէ։ Բրիւթովը, ժողովրդեան միահամուռ պահանջման առջեւ տեղի տալով՝ աղաւ կը թողու ամէնքն ալ. նոյն միջոցին ամէն կողմէն կսկսին պոսալ կեցցէ աղաւ Պուլկարիա, անկցի Օրմանեան եւ Օրմանեանները. . . .

Ժողովուրդը այսօր որոշապէս երկու գլխաւոր կուսակցութեան բաժնուած է, եւ վերջին ծայր իրարու դէմ լարուած դրութեան մէջ կը գտնուի. մին շոջ աղաներու եւ թաղականներու կողմը կը բռնէ, որոնք մեծաւ մասամբ «պղտիկաններու» համախոսակէս հողով ու մարմնով պղտիկ եւ խելքով աղքատ տեղացիներն են։ Իսկ միւս մասը ամբողջ զաղթականութիւնը իր հետ ունենալով տեղւոյս ազատամիտ եւ զարգացեալ երիտասարդութիւնը, կրկնուր օրը ժողովրդեան ամբողջ խօսակցութեան նիւթը յիշուի չյիշուի ի-

շուրջը կը դառնար, շատ տեղեր կատաղի վիճաբանութիւններ տեղի ունեցած են։

Թաղական խորհուրդը հաւաքեալը բարբաբաճ այս անակնկալ նախատինքն, յանձն կառնեն ամէն գնով իրենց վրէժը լուծելու եւ գաղաճանական ստոր միջոցներով կը յաջողին իսկ 7—8 երիտասարդիկուր գէմ ձերբակալման հրամանագիրներ հանել տալու. նոյն երկուր 3—4 հողի կը ձերբակալուին որոնցմէ մին տեղացի իսկ մնացեալներն գաղթական։

Հետեւեալ օրն՝ երկուշաբթի, մեռելոցին, սեւաչլուր խոսկարարը չյիշուիներու կարծեցեալ պարագլուխներուն ձերբակալուելէն զոհ. զարձեալ հրաման կընէ պատարագիչ հօր որպէսզի յիշէ իրենց սիրեցեալ պատրիարքին անունը. Երիտասարդութեան ժամանակ երբ կը լուր գաղաճանին անունը, հակառակ ժողովրդեան սակառութեան, «չպիտի յիշուի ներք միեւնոյն ու ժոզնութիւնը կրկնուի. քահանան ալ յուսահատած այս անգամ ժողովրդեան սրդար ձայնին առջեւ կը պայտնէր. տիրացու սարկաւազը, հակառակ պատարագիչ քահանային պայտնման, ինքն կսկսի յիշել. զարձեալ չպիտի յիշուի ներք կը կրկնուի, ժողովուրդը տեսնելով որ այդ ազոտ արարածը նկատողութեան չառնէր իր արդար ձայնը, անմիջապէս զինքը սեպանէն վար առնելով պէտք եղածին պէս կը ձեռնէ. այդ օրն ալ արարողութիւնը կը խանգարուի։ Թաղական խորհրդոյ առաջնորդութեամբ վրայ կը հասնին ստաիկանները եւ մի քանի ձերբակալութիւններ տեղի կուսնան։ Յաւ ի սիրտ կը յայտնենք թէ՛ Սուլթան մը՝ Տոմկաստանէ մէջ չը կըրցաւ միեւնոյն հիմա եկեղեցւոյ մէջ ձերբակալութիւն կատարել տալ, այսօր Ռոստոքի հայն է սր կընէ։

Տեղւոյս լաւամիտ կառավարիչը տեսնելով որ խնդիրը լսի աղապային կերպարանք ունի, նոյն իսկ այն օրը ամէնը միաօրին աղաւ կարձակէ։

Պիոն

Յ. Գ. — Կրկնուր թէ թաղ. խորհրդոյ անդամներէն Տ. Ստեփան Փափազեանի բացակայութեան Տ. Ստեփան Մէլիքեթեանի, զանի սրկիոյ անուանած է. Այս վերջինս անմիջապէս թաղ. խորհրդարանի գլխաւոր մեծամարտի կը հրաւիրէ այդ պարոնը. Տ. Ստեփան Փափազեան զողջալով կուրանայ իր պահ մը ըրած նախատինքը, ներկայից միջամտութեամբ հաշտութիւն կը գոյանայ։ ()

() Ռոստոքէն նոյնիմաստ թրդ-թակցութիւններ կը տեղան խոսկարութեան։

ԹԷ ԻՆՉՈՒՎ ԱՌԱՋ
ԿԵՐՔԱՅ ԸՆԹԵՐՅԱՐԱՆԵՐ

(Շատ նախորդ րիւնն եւ վերջ)

Փողոցային քաղաքային շէք տղերք ընկերութիւնը, այս պատճառաւ վարել անդամներուն սրբատին մէջ մարտն էր յարատեւութեան ոգին, մանաւանդ ներկայացուցնելու մասնակցութեանը պատճառաւ այնպիսի ազգայիններ սր հակառակ իրենց գիշարած նախանձելի հարստութեանը, տոմսակները ընդունած եւ վերջը, հետեւեալ օրը արժէքը չը վճարելու փոքրօրցիկ թիւնը ունեցան:

Եթէ ըսենք թէ ժողովուրդը ստակ չի տար դարձեալ կը սխալինք. հաշուենք անցեալ սեպտեմբեր ամիսէն մինչեւ մայիս ամիսը եւ պիտի տեսնենք որ տրուած ներկայացումներէ, նուագահանգէսներէ, հանդանակութիւններէ եւ պարահանգէսներէ զօրացած գումարը մինչեւ 6000 ֆրանքի կը բարձրանայ. ո՞ր կէտիւ այս ստակը. ժողովուրդը քրտնալին է՞, չափը անցած չէ՞ր. այսչափ նպատանքը ընելէ ժողովուրդը ձանձրացնել չէ՞ր. արդէն մեր բոլոր հարստաները միմի կողմ քաշուած չեղորդ իրք բռնած էին. արդեօք նոքա չեն զլար ընթերցարանի պէտքը. չեն կրնար իրենց 10ական 20ական ֆրանքներով օգնել ընկերութեան հաստատելու համար ցարդ բազմացուած ընթերցարանը:

Շատ տեղերէ կրնանանք, ինչպէս որ ես ալ լաւ ստուգած եմ թէ Ռուստոքի ընթերցարանը շատ լաւ փճակ ունի. բայց այդ Ռուստոքի համար մեծ պարծանք մը չի կրնար համարուիլ. Ռուստոք շատ աւելի կանոնաւոր ընթերցարան մը կրնար ունենալ. քանի որ զարկ է ուրիշ ազգային կարիտը հաստատութիւններէ:

Մանրանանք հոս քիչ մը.

Ռուստոքի մէջ տարեկան 6—7000 ֆրանք ժողովուրդին գրպանէն չեն չեղնէր նպատանքու համար. բայց չչփութենք, խօսքս չէ ազգային տուրքերու համար. հետեւաբար ամբողջ մէկ տարուան մէջ ընկերութեան վարել մարմինը ամենայն դիւրութեամբ կրնայ ընթերցարանի տարեկան 1000—1200 ֆրանքի պիտե՞ն ապահովել. բայց ի նկատի առնենք նաեւ ընկերութեան պիտե՞ն, ուսկէ գրեթէ չենք ին վարձքը ելնելէ դատ՝ ուրիշ ծախքեր ալ կրնայ ապահովել. բայց միմիայն մի բան կայ որ նա առաջ գացած է. անոր ալ պատմութիւնը լաւ եմ. նոքա առաջին անգամ ունեցած են սրճարանի մէջ մի փոքր տեղ ու յետոյ երթալով ընդլայնած են գործը. ինչո՞վ. ժողովրդեան կողմանէ ընկերանարար գումար են քաջալե-

տակէ չորս տարի առաջ ընթերցարան եւ բառական կանոնաւոր վճարի մէջ. ինչո՞ւ համար յառաջ չի գնաց. Միթէ կը պակասէին երիտասարդներ. ոչ, բնականաբար ոչ, պատճառը դրամն էր, դրամը. առանց դրամի ե ոչ մի բան կարող է առաջ երթալ. Շատեր կը սեն թէ, ի՞նչ կընեն, թող դրամ հաւաքեն. բայց արդեօք այդ ըսողները օ սանթիմոններ հաւաքած, եթէ ունենային այն տան չի պիտի ընէին այդ խօսքը:

Մենք մեր պարտականութիւնը կատարած ենք, ու այսուհետեւ կը հրա իրենք ուրիշ կարող անձնաւորութիւններ, որպէս զի գան յառաջ տանին գործը որ մեր ալ ամենամեծ իրզն է. Բայց ժողովուրդը պարտաւոր է օգնել. առանց այդ օգնութեան ոչ ոք կրնայ «ընթերցարանը պահել»:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ներսէս եպօս. ընդարձակ տեղեկագրով մը Պատրիարքարանի յայտնած է Վանայ եկեղեցիներուն ու գարսններու խարխուղ փճակը եւ խարքանչիւրին նորոգման համար 70 ոսկի պահանջած է. նորոգութեան կարօտ այդ շէնքերուն թիւը 10ի կը հասնի:

Նպատակ յանձնաժողովը իր մէկ նիստին մէջ որոշած է յանձնարարել ներսէս եպօսի, որ այժմ երկու եկեղեցոյ շինութեանը ձեւնարկէ, որուն համար անմիջապէս 100 ոսկի զրկու որոշած է:

Տիգրանակերտի տեղապահ Եղեկիէլ վրդ. Պատրիարքարան գրած է թէ՛ կառավարութեան կողմէ Տիգրանակերտի մէջ բացուելիք արուեստագիտական վարժարանին առաջնորդարանի կողմէ 1250 զրուշ նուիրած է. նանձնաժողովը գոհ եղած է այդ նուէրի համար, որովհետեւ յառաջիկային հայ տղաքներ ալ պիտի յաճախեն այդ վարժարանը:

Որոշուած է 200 ոսկիի չափ նպատ զրեւել վերստին Տէրսիմի, Չմշկածաղի, Սիոի եւ Խիզանի կարօտեալներուն համար:

Ձէյթունէն Պատրիարքարանի կը հայտնեն թէ տեղւոյն բողոքականները սկսեցին իրենց վարժարաններուն ծրագիրը բարձրացնել եւ միանգամայն տեղացի բողոքական հայերու գրամաղլոխ հայթայթել, որով դիւզացիք իրենց երկրագործական պէտքերը կը հոգան. Այժմ Ձէյթունի մէջ ցորենը շատ սուղ է եւ վարուցան չունեցողները կարօտ փճակի մէջ են:

Աւստրիական թերթ մը կը հայտնէ թէ Պօլիս արտակարգ յուզում մը կը տիրէ. իբր թէ

Բ. Գուռը տեղեկութիւն առած է որ Փոքր-Ասիոյ ուսումնարանի սահմանին վրայ յողովուած են մեծ թուով հայ գաղթականներ: — Իլդիրի մէջ պիտի կատարուի գրադէա եւ դատաստարանի ղեկավարութեան գործունէութեան յարեւանը:

Որչափ չափ թերթներուն ունենայ Պ. Մամուրեան, այսուամենայնիւ քաջալերութեան արժանի է իր յարատեւ գործունէութեան համար:

Յոսեփեանի հանդէսը պիտի կատարուի յառաջիկայ Հոկտեմբեր 17 կիրակի օր:

Գրամական եւ այլ նուէրներ, հեռագիրներ, ուղերձներ եւ ամեն տեսակ թղթակցութիւնք, որք պիտի արձանագրուին եւ ապա մասնաւոր տեղեկագրով հրատարակուին, կուղարին Ա. Նախագահին հետեւեալ հասցեով՝ Մեղիսեղեկ Ս. Արհիպ. Մուրասեանց Իզմիր:

Ալլահապատի անգլո-հնդկ թերթ մը կը հայտնէ թէ Պէնտէր-Պուշէր լուրեր կը պատին որ Իսպահանի նահանգին մեծ քաղաքներուն մէջ մեծ յուզում կայ քրիստոնեայններուն դէմ: Աւելի եւս այդ յուզումները նկատելի են Իսպահան, ուր երեք հայկական գաղութներ կան: Զիլի Սուլթան նահանգապետը, ներկայ շահի եղբայրը, մեծ հաճակաւ քով կը վերաբերի դէպի հայերը եւ ամէն ճիգ կը թափէ այդ յուզումներուն վերջ տալու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Ռուստական Լեհաստանի Տօմարովա Սօսնավիկա գաւառին մէջ մօտ ութ հազար հանքային գործաւորներ գործադուլ ըրած են: Գործաւորները կը պահանջեն օրական ութ ժամ աշխատութիւն, վարձի յաւելում, գործաւորական հանգստաթոշակ, եւ ապահովագրութեան կանոնաւորում: Գործաւորներու տէրերը հալեցիւ եւ Սիլեզիա մարզիկ զրկած են գործաւորներ վարձելու:

Միացեալ Նահանգներու Նախագահը պիտի յայտարարէ Բուպալիներուն թէ՛ տեղւոյն ժողովագրութեան յետոյ, որ պիտի տեսէ մինչեւ տարւոյս վերջը, Բուպալիները պիտի հրաւիրուին կատարել ընդհանուր ընտրութիւնները: Եւ պիտի աւելցնէ որ Միացեալ Նահանգները մտադիր են Բուպալի կատարեալ ազատութիւն տալ, սահմանադրական վարչութեամբ:

Միացեալ Նահանգներու Նախագահը Օկեան-Գրովի մէջ 12000 հոգի է բաղկացած միթիւնկի մը մէջ բոսն ճաւին մէջ հետեւեալ կերպով խօսած է Ֆիլիպեան կղզիներու մասին:

Ամերիկեան դրօշը պիտի մնայ հոն, ուր որ պատուուած է. պի-

տի մնայ ոչ իբր նշան բունակալութեան եւ ճնշումի, այլ իբր նշան ազատութեան եւ մարդասիրութեան: Աստեղագարդ. գրօշակը ինչ որ ըրած է ամերիկացիներու համար, նոյնը պիտի ընէ եւ այն ժողովուրդներու համար, որոնք պատերազմի բախտի բերմամբ ենթարկված են մեր հովանաւորութեան:

Ռուս կառավարութիւնը կուս մարզիկ զրկած է 50 տեղ սրոշելու ուսակական գիւղեր հիմնելու համար:

Ինիկները հողի սովորութեան կը ներդրեն, իսկ ուս կառավարութիւնը ազատ հոգեբը ուսուների համար կը պահէ, ուստարրով կովկասը լեցնելու համար:

Թիւրք քաղաքական շրջանակներու մէջ լուրեր կը պատին Պարսից Շահի հիւանդութեան մասին: Թէ հրանէն եկողներ կը պնդեն թէ Շահը անուրմելի թաքաւ ունի, իսկ ուրիշները կը հաստատեն որ հոգեկան հիւանդութիւն ունի:

Լահէի ժողովին գերմանական պատուիրակ Շաէնկէլ որ հակառակ խաղաղութեան ժողովին պրօչիւր մը գրած էր, ժողովէն վերջն ալ յողուած մը գրած է «ուժը իրաւունք» է սկզբունքի ոգիով:

Բրօքէսթրի կարծիքով պետութեանց իրաւունքներու ամենալաւ պաշտպանը «լու սուրն է»:

ԱՂՋԱՆՅ ԿՐԹԱՐԱՆ
ԳԻՇԵՐՈՒԻԿ ԵՒ ԵՆՐԵԿԱԾՅ

Աղջկանց կրթարանն իր Գրգ տարւոյ շրջանը կսկսի յատարկայ սեպտեմբեր 1ին: Սոյն վարժարանն որ երեք տարիներէ ի վեր անընդհատ իր ընթացքը կը շարունակեալ սեպտեմբեր 1ին կրկին կը նկատուի իր կրթական եւ ուսումնական ծրագրին վրայ խօսիլ:

Վարժարանը բարձրագոյն նախակրթարանի մը ամէն պահանջուած պայմաններն ունի, դասերը կառնողին մեծ խնամքով, Լեզուներու մասին ունի Հայերէն, Ֆրանսերէն, Պուլկարերէն սրոնք պարտաւորիչ են իսկ Անգլիերէնը կամաւոր:

Ընդունելութիւնք ու մասնաւոր տեսակցութիւնք կը կատարուին ամէն օր եւրոպական ժամը 9—12:

Տնօրէնութիւն
Շ. Ճիլիւրճեան
Վառնա, Կրկ թաղ, 17 Օդոսա.
1—3

Ա. Զ. Գ.

Ամերիկանեանցի գարոցը կը բացուի սեպտեմբեր 1ին: Փոստագրուներէն կը խնդրուի գրել Ամերիկանեանցի, Պալկանաքայ փողոց, թիւ 239:

Ամէն օր ժամը 10—12 տաւալում, եւ 4—6 երեկոյ.
3—4